ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«14» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000121

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***«Արմավիր-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000121

<14> 12 2020թ.

Արմավիրի մարզի «Արմավիր-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման /ՇՄԱՌԳ/ հաշվետվություն
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրութային փաստաթուղթ
Իրականացման վայրը՝	Արմավիրի մարզի Արմավիր-8 միկրոռեգիոնում ընդգրկված 9 գյուղական համայնքներ

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 1-ին մասի՝ «Արմավիր-8» ՄՄՀՏՊ փաստաթուղթը հանդիսանում է քաղաքաշինության բնագավառին վերաբերող հիմնադրութային փաստաթուղթ:

«Արմավիր-8» ՄՄՀՏՊ փաստաթղթերի նախագծերը ներառում են՝ Այգեկ, Արևշատ, Բաղրամյան, Փարաքար, Մերձավան, Մուսալեռ, Նորակերտ, Ոսկեհատ, Պտղունք գյուղական համայնքները: «Արմավիր-8» ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է 6896.95 հա մակերեսով տարածք, որտեղ բնակչության թիվը ներկայումս կազմում է 30650 մարդ:

ՄՄՀՏՊՓ նախագծի հիմնական նպատակն է՝ միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքներում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, ինչպես նաև համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը և շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը: Սույն փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման վերլուծությունները կատարվել են նախագծի դրույթներին համապատասխան, հաշվի առնելով ծրագրում ներառված համայնքների 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը: Ծրագրում ընդգրկված գյուղական համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար փաստաթղթում համալիր կերպով գնահատվել են գոյություն ունեցող իրավիճակը և առկա բնապահպանական խնդիրները և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Նկարագրական մաս. Միկրոռեգիոնը գտնվում է Արարատյան հարթավայրի կիսաանապատային լանդշաֆտային գոտում, որին բնորոշ են անապատները և մշակովի տեղամասերով հողատարածքները, որոնք ձևավորվել են մարդու հազարամյա ագրոմշակութային գործունեության արդյունքում: Դիտարկվող տարածաշրջանը հանդիսանում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈՍՏ ԹՅՈ • ՀՀ ԵՐԵՎԱՆ • ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER • SNCO • RA YEREVAN
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

է ՀՀ հիմնական գյուղատնտեսական շրջանը, սակայն հողերի աղակալման և ճահճացման պատճառով հարթավայրի ավելի քան քառորդ մասը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում: Նման տարածքների ընդարձակմանը նպաստում են նաև ոչ նորմավորված ոռոգումը, դրենաժային համակարգի անբավարար վիճակը և ջրալույծ աղեր պարունակող ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացումը:

«Արմավիր-8» միկրոռեգիոնում ներառված գյուղական համայքները գտնվում են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում և ընդգրկում են Մեծամորի գետավազանը: Տարածքում հանդիպող գրունտային ջրերը պատկանում են ալյուվիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևույթային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Դրանք տարածքում հիմնականում հանդիպում են 6-7մ խորության վրա, իսկ տեղ-տեղ՝ մինչև խորությունը հասնում է 5-5.5մ: Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 9 բալ և ավելի:

Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ, գեղատեսիլ և տեսարժան վայրեր, որոնք նպաստավոր են տուրիզմի զարգացման համար: Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկային կուլտուրաների մշակությունը, հողագործությունը, խաղողագործությունը, մեղվաբուծությունը և առևտուրը:

«Արմավիր-8» միկրոռեգիոնի գյուղական համայնքներում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների հետ կապված հիմնախնդիրներ, որոնց համար համայնքների զարգացման ծրագրերում սույն փաստաթղթով առաջարկվել են հեռանկարային զարգացման ուղղություններ:

Ծրագրում ընդգրկված համայնքների սոցիալական միջավայրի և շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններ են հանդիսանում.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արտադրական հոսքաջրերով և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը,
- անտառի անկանոն օգտագործումը, ինչն էներգետիկ ճգնաժամի տարիներին հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող բնական գործոններից են հանդիսանում՝ սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

Ներկայումս «Արմավիր-8» միկրոռեգիոնում ընդգրկված համայնքներում մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման, անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով: Մթնոլորտ արտանետումների 93.4%-ը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին: Համայնքներում առկա փոքր ձեռնարկությունները գործում են պլանային արտադրողականության 5-10%-ի սահմաններում: Արդյունաբերությունը հիմնականում զարգացած է Մերձավան, Մուսալեռ համայնքներում: Արդյունաբերական արտանետումների քանակները զգալի չեն, ձեռնարկությունները պատկանում են վտանգավորության 4-րդ և 5-րդ դասերին: Արդյունաբերական բոլոր աղբյուրներից արտանետումների ընդհանուր քանակները կազմում են 32.3 տ/տարի: Համայնքներում ֆոնային աղտոտվածության մակարդակն աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

02543163
ՓՈՐՁԱԳԵՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ներկա դրությամբ բոլոր համայնքները գազաֆիկացված են, բացառությամբ՝ 5 համայնքների: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 1412.63 տ/տարի, իսկ մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը հաշվարկվել է 36.4 մլն. դրամ տարի: Հեռանկարում ջեռուցման համար նախատեսվում է օգտագործել հիմնականում բնական գազ (60%), էլեկտրաէներգիա (15%), արևային էներգիա (20%) և բիոգազ (5%), արդյունքում արտանետումները ջեռուցումից կնվազեն 46 տոննայով՝ ի հաշիվ ջեռուցման նոր տեխնոլոգիաների: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից ընդհանուր կկազմեն 1501.87 տ/տարի: Մթնոլորտ վնասակար արտանետումներից «Արմավիր-8» համայնքներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը հաշվարկվել է 39.0 մլն. դրամ տարի:

Տարածքի համալիր գնահատականը վերլուծվել է՝ տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ, համաձայն արդյունքների անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին «Արմավիր-8» ՄՄՀՏՊՓ տարածաշրջանի համայնքների համար կազմում է 6896.95 հա, իսկ տարածքի համալիր գնահատականը հիգիենիկ իրավիճակով համարվում է բարենպաստ: Հեռանկարում, բոլոր ձեռնարկությունների համար նախատեսված արտադրողականության աճի դեպքում տարածքի համալիր գնահատականը ևս կլինի բարենպաստ:

Ներկայումս գետերի աղտոտվածության հիմնական պատճառ են հանդիսանում ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված բնակավայրերի տնտեսակենցաղային հոսքաջրերը, որոնք առանց մաքրվելու թափվում եմ գետավազանների մեջ՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը հեռացվելով Մեծամոր գետ, հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը, ինչի պատճառով վերջին տարիներին Ախուրյան գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը, արդյունքում «Արմավիր-8» համայնքների սահմաններում գետի օգտագործումը ռեկրեակցիոն նպատակով բացառվում է: Նախագծով նախատեսվում է հեռանկարում գյուղական համայնքների համար կառուցել կեղտաջրերի մաքրման կայաններ: Գյուղական համայնքների աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս «Արմավիր-8» ամբողջ միկրոռեգիոնի տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի նախատեսում: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայաններ, ինչը կապահովի 98% մաքրման արդյունավետություն և կունենա բազմաստիճանային մաքրման կառուցվածք, սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, պարզարան, և այլ կառույցներ:

«Արմավիր-8» ՄՄՀՏՊ փաստաթղթում ներառված 9 գյուղական համայնքների ընդհանուր մակերեսը կազմում է 6896.95, իսկ միկրոռեգիոնի բնակչության հաշվարկային թիվը նախագծով կազմում է 31620.մարդ: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերը կլինեն՝ այգեգործությունը, գինու արտադրությունը, առևտուրը, խաղողագործությունը, մեղվաբուծությունը, անասնապահությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը: Պահուստային հողերը տարածաշրջանում բացակայում են: Նախագծով նախատեսված հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի գործառական նշանակության փոփոխությունները ներկայացվում են ստորև.

«Արմավիր-8» հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափի միավորը	Ելակետային	Առաջնահերթ	Հեռանկարային
1	2	3	4	5
Տարածքը (ընդամենը),այդ թվում՝	հա	6896.95	6896.95	6896.95
գյուղատնտեսական նշանակության հողեր (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողատեսքեր)	հա	4994.72	4926.85	4912.48
բնակավայրերի հողեր	հա	1444.28	1505.11	1516.36
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	հա	227.98	229.90	232.14
էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	հա	56.26	61.38	62.26
հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	43.58	43.58	43.58
հատուկ նշանակության հողեր	հա	87.62	87.62	87.62
անտառային հողեր	հա	0.19	0.19	0.19
ջրային հողեր	հա	42.32	42.32	42.32
պահուստային հողեր	հա	0.00	0.00	0.00

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում ավտոտրանսպորտի, արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները, արդյունաբերական և կենցաղային թափոնները: Համաձայն համայնքների տարածքների հողերի գնահատման արդյունքների վերլուծությունների՝ հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով, հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար: Հեռանկարում, տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի զգալի ավելացում չի սպասվում, քանի որ նոր արդյունաբերական ձեռնարկությունների թվի զգալի ավելացում չի նախատեսվում: Բնակչության թվի ավելացման հետ կապված՝ կզարգանա անասնապահությունը և հողագործությունը, սակայն արդյունքում օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածությունը չի ազդի տարածքի էկոլոգիական վիճակի վրա և տարածքը կմնա որպես թույլ աղտոտվածության գոտի:

Հողի աղտոտման կանխարգելման և հակաէռոզիոն միջոցառումների շարքին են դասվում համայնքային տարածքների կանաչապատումը, թափոնների կառավարումը և այլն: Հեռանկարային ժամանակահատվածում նախատեսված է վերականգնել միկրոռեգիոնի տարածքում շահագործված և շահագործվող օգտակար հանածոների հանքավայրերի խախտված տարածքները: Ռեկուլտիվացման/վերականգնման աշխատանքները կներառեն երկու փուլեր՝ կենսաբանական և տեխնիկական: Կենսաբանական եղանակը կկիրառվի այն գրունտերի համար, որտեղ էրոզիան կանխարգելելու նպատակով անհրաժեշտ կլինի ստեղծել բուսական շերտ:

Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1444.28 հա մակերես, իսկ գործող աղբավայրերի ընդհանուր քանակը համայնքներում 9-ն է: «Արմավիր-8» միկրոռեգիոնի գյուղական համայնքներում աղբահանումը կատարվում է անկանոն ձևով՝ հանգեցնելով համայնքներում հակասանիտարական վիճակի: Համայնքներում առաջացող

կենցաղային կոշտ թափոնների տարեկան քանակը ներկա իրավիճակում՝ 30650 մարդու համար կազմում է 5865,5 տ/տարի: Հեռանկարում, 31620 հազ. մարդ բնակչության քանակի դեպքում թափոնների ընդհանուր հեռանկարային քանակը կկազմի ~ 7905 տ/տարի: Իսկ արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 67.71 տ/տարի, որից ոչ օգտագործելի թափոնների քանակը կազմում է 28.38 տ/տարի, որը ներկայում նույնպես հեռացվում են կենցաղային թափոնների աղբավայր, քանի որ համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար համապատասխան աղբավայր: Օրգանական ծագման թափոններ են առաջանում առողջապահության բնագավառի հաստատություններում, որոնք վնասազերծման նպատակով հանձնվում են այդ թափոնները վերամշակող լիցենզավորված կազակերպությունների:

«Արմավիր-8» ՄՄՀՏՊ և «Արմավիր-6» ՄՄՀՏՊ փաստաթղթերում ընդգրկված համայնքների աղբահեռացման, տեսակավորման և վերամշակման համար, Արմավիրի մարզպետարանի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N 01/7/05717-2019 գրությամբ «Արմավիր-8» միկրոռեգիոնի համայնքների համար առաջարկվել է Շահումյան համայնքին հարակից աղբավայրի տարածքում նախատեսել սանիտարական աղբավայր՝ տեսակավորման և վերամշակման համար, միաժամանակ կոնսերվացնելով նշված համայնքներում առկա աղբավայրերը: Միաժամանակ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքերի նախարարության կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ մշակվել և կառավարության հաստատմանն է ներկայացվել «Աղբահանության համակարգի ռազմավարությունը», որի հաստատումից տետո և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա միայն հնարավոր կլինի մշակել հանրապետության տարածքների աղբահանության ինտեգրված սխեմաներն ու ծրագրային մշակումները:

«Արմավիր-8» միկրոռեգիոնի համայնքներում տեղակայված են 9 գերեզմանոցներ, /ընդհանուր 24 հա տարածքում/, որոնք գործող են: Գերեզմանոցներում ներկայումս սանիտարական պահպանման գոտին ապահովված չէ: Նախագծով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով՝ հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում:

«Արմավիր-8» միկրոռեգիոնի համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի՝ համայնքապետարաններում մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծումը, նոր տարածքների կանաչապատման իրականացումը՝ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ոռոգման համակարգի բարելավումը: Այդ նպատակի համար նախատեսված են ստեղծել այգիներ, կանաչ գոտիով սպորտ-հրապարակներ, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Նախագծված են նաև մայրուղային ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների սանիտարական պահպանության գոտիների կանաչապատում:

Ներկա դրությամբ «Արմավիր-8» ՄՄՀՏՊՓ-ում ընդգրկված համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 11.2 հա: Հեռանկարում, գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10 մ²/մարդ, հասցնելով մակերեսը մինչև 37.94 հա:

«Արմավիր-8» միկրոռեգիոնի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Բնակավայրերին բնորոշ է հեղեղային ձորակների, ինչպես նաև սողանքային երևույթների տարածումը: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր

02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

համայնքերի համար նախագծով առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում բնակավայրերի, հատկապես կառուցապատված տարածքների համար: Որոշակի տարածում ունեն նաև ճահճացած տարածքները, որոնց համար ևս նախատեսվել են միջոցառումներ:

ՇՄԱՌԳ հաշվետվությանը կից փաստաթղթերում վերլուծվել է նաև «Արմավիր-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող բնածին վտանգները և /կարկուտ, քամի, հեղեղ, սելավ/ վտանգավոր երկրաբանական երևույթները /սողանքներ/ և հնարավոր արտակարգ ռիսկերը և առաջարկվել են կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված նախագծային լուծումներ:

Համայնքների տարածքային զարգացման համար առաջնահերթ ընտրվել են այնպիսի ուղղություններ, որոնց համար ներդրումները նպաստավոր կլինեն տարբեր ոլորտների զարգացման համար և կխթանեն.

- արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,
- ինժեներական ենթակառուցվածի, ճանապարհային ցանցի և սոցիալ- կենցաղային համակարգի զարգացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը,
- երկրորդական և միջգյուղական ճանապարհների բարելավմանը և բարեկարգմանը,

"Արմավիր-8" տարածաշրջանի զարգացման ծրագրով նախատեսվող աշխատանքները և նախագծային լուծումներ միտված են միկրոռեգիոնի սոցիալական և բնապահպանական իրավիճակի բարելավմանը և առողջացմանը: Տարածաշրջանում, նախագծային ժամանակաշրջանում շրջակա միջավայրի պահպանության, բնապահպանական իրավիճակի բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար ծրագրով նախատեսված առաջնահերթ և հեռանկարային միջոցառումները ներառում են.

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում, ճանապարհաշինության աշխատանքներ;
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների արեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում;
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում;
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարելավում;
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում;
- շրջաններում եռամսյակը մեկ՝ շրջակա միջավայրի (օդ, ջուր,հող) մոնիտորինգի կազմակերպում;
- գետեր թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում;
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում:
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում;
- համայնքներում հանգստի գոտիների ստեղծում;
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում(սպանդանոցի կառուցում);
- սանիտարական աղբավայրերի և աղբամշակման գործարանի կառուցում, աղբի տեսակավորում;
- ճանապարհի եզրերին, հանգստի գոտիներում կանաչապատման իրականացում:

02543163
ՄՇՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- մեքենաների տեխնիկական վիճակի վերահսկողության սահմանում, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը;
- ջեռուցման նոր տեխնոլոգիաների կիրառում, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները մինչև 46 տ/տարի:
- ճահճացած տարածքների չորացումը և բարելավումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների վերականգնումը/ռեկուլտիվացիան,
- արդյունաբերությունում առաջատար տեխնոլոգիաների ներդրում:

Տարածաշրջանում հեռանկարային ժամանակաշրջանում շրջակա միջավայրի բարելավման նպատակով նախատեսված է՝

- կենցաղային թափոնները հավաքող կազմակերպությունների ցանցի ընդլայնում, մեծ և փոքր բնակավայրերի համար դիֆերենցված աղբահանության միասնական համակարգի ստեղծում՝ աղբի տեսակավորման, վերամշակման և վնասազերծման գործընթացների կիրառմամբ և հատուկ մասնագիտացված կազմակերպություններին և համապատասխան ձեռնարկություններին հանձման համար,
- գյուղական բնակավայրերում հասարակական նշանակության բաց տարածքների ստեղման, բարեկարգման տարրերի և ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ընդլայնում:

Եզրափակիչ մաս: «Արմավիր-8» ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված գյուղական համայքների համար առաջարկված քաղաքաշինական լուծումների իրականացման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, ՇՄԱՌԳ-ում համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված տարածքներում, հետևաբար նախագծված համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, իսկ բուսատեսակներին և կենդանատեսակներին հասցվող վնասը՝ նվազագույն:

Փաստաթղթի փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱՌԳ հաշվետվությունը լրամշակվել է: Ծրագրի ազդեցության ենթակա համայնքների հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է հաշվետվության գնահատման և փորձաքննական գործընթացներին:

«Արմավիր-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծը ներառում է մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն, ինչը թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները: Մշտադիտարկումների արդյունքների հիման վրա իրականացված հետնախագծային վերլուծությունը թույլ կտա հետագա քաղաքաշինական փաստաթղթերում ներառել տնտեսության զարգացման առավել իրատեսական ոլորտներ՝ տարածաշրջանի բնապահպանական պահանջների, նորմերի և սահմանափակումների համադրմամբ ապահովելով մարդու առողջության, բնականոն զարգացման և բնառեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" ՊՈԱԿ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ կողմից ներկայացված Արմավիրի մարզի «Արմավիր-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան